Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Պ-319-28.06.2022,06.09.2022-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Տարրական հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների առաջինից չորրորդ, ինչպես նաև հատուկ ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների բոլոր դասարանների սովորողներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է, համապատասխանաբար, տարրական ընդհանուր և հատուկ հանրակրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով:»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին կետում «պատվիրման,» բառից հետո լրացնել «լրացման,» բառը:»:

Հոդված 4. Օրենքի 46-րդ հոդվածը լրացնել նոր՝ 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «8. Նախադպրոցական, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով, պետական բյուջեի միջոցներից ստանում են նպատակային ֆինանսավորում՝ Հայաստանի հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:»:

Հոդված 5. Օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ «3. Պետությունը հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոններում սովորող երեխաներին ապահովում է դասագրքերով և ուսումնառության համար անհրաժեշտ այլ նյութերով:»:

Հոդված 6. Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունիսի 1-ից:
2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: